Հավելված N13
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի հայկական պետական ինստիտուտ»
հիմնադրամի ռեկտորի 2016թվականի
հոկտեմբերի 31-ի N 39 հրամանի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՐԽԻՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 ,,Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) արխիվը ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է "Արխիվային գործի մասին" ՀՀ օրենքի, արխիվային գործի վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի ու չափորոշիչ-մեթոդական փաստաթղթերի, ինստիտուտի կանոնադրության և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.2 Ինստիտուտի արխիվը (այսուհետ՝ բաժին) իրականացնում է "Արխիվային գործի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ "Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ" հիմնադրամի գործունեությամբ առաջացած գիտապատմական, սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակույթային նշանակություն ունեցող փաստաթղթերի մշտական պահպանության:

1.3 Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերը, մինչև մշտական պահպանության հանձնելը, "Արխիվային գործի մասին" ՀՀ օրենքով սահմանված ժամկետների ընթացքում, ժամանակավորապես պահպանվում են ինստիտուտի արխիվում:

1.4 Արխիվից կարելի է օգտվել՝ գործերը դուրս բերել կամ փաստաթղթերը պատճենահանել միայն ինստիտուտի ռեկտորի, կամ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի թույլտվությամբ:

1.5 Արխիվը պահպանում է՝

1) գործավարությամբ ավարտված Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերը.
2) անձնակազմին վերաբերվող փաստաթղթերը.
3) շրջանավարտներին վերաբերվող փաստաթղթերը (բակալավր, մագիստրոս, ասպիրանտ, հայցորդ).

4) գործնական աշխատանքի համար անհրաժեշտ երկարաժամկետ պահպանության (10 տարուց ավելի) փաստաթղթերը.
5) արխիվային փաստաթղթերի կազմի ու բովանդակության վերաբերյալ ստեղծված տեղեկատու–որոնողական միջոցները (համակարգը):
6) հրամանագրքերը.
7) հաշվապահական քարտերը.

2. ԱՐԽԻՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1 Արխիվի խնդիրներն են՝

1) ինստիտուտի բոլոր ստորաբաժանումների գործունեությունը արտացոլող փաստաթղթերի արխիվացում և պահպանում,
2) արխիվային փաստաթղթերի գիտատեխնիկական մշակում, հաշվառում, օգտագործում ու պահպանության ապահովում,
3) Ազգային արխիվում պահպանության ենթակա փաստաթղթերի նախապատրաստում, գործավարությամբ ավարտված և գիտատեխնիկական մշակման ենթարկված երկարաժամկետ (10 տարուց ավելի) փաստաթղթերի և բուհի ականավոր դասախոսների ու գիտնականների անձնական փաստաթղթերի պահպանում:
4) արխիվը պարտավոր է ապահովել ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ իր առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացումը:

2.2Արխիվն իր առջև դրված խնդիրների լուծման համար իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ինստիտուտի գործավարության կարգին համաձայն՝ գործավարական տարին ավարտելուց հետո ընդունում է կառուցվածքային ստորաբաժանումների փաստաթղթերը՝ համապատասխան ցուցակներով և ակտերով.
2) սահմանված կարգով նախապատրաստում և կազմակերպում է ընդունված փաստաթղթերի փորձաքննությամբ արժեքավորումը և Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմի մեջ մտնող փաստաթղթերը սահմանված կարգով Ազգային արխիվ հանձնման աշխատանքները.

3) բարելավում է փաստաթղթերի պահպանության, հաշվառման, համալրման և օգտագործման պայմանները, այդ մասին ղեկավարությանը ներկայացնում է առաջարկություններ.
4) ստեղծում և կատարելագործում է արխիվում պահվող փաստաթղթերի տեղեկատու – որոնողական միջոցները (համակարգը), կազմակերպում է փաստաթղթերի օգտագործումը.
5) պատրաստում է՝ ՀՀ և արտերկրների կողմից սոցիալ-իրավական հարցումների պատասխանները, իսկության հաստատումները.
6) կատարում է՝ դիպլոմների, դիպլոմի հավելվածների, վկայականների հաստատում (Ապոստիլ).
7) կատարում է՝ հաշվապահական, ուսանողների և շրջանավարտների ակադեմիական տեղեկանքների տրամադրում.
8) ռեկտորի պահանջով տեղեկացնում է արխիվում պահպանվող փաստաթղթերի կազմի ու բովանդակության մասին.
9) մեթոդական օգնություն է ցույց տալիս ինստիտուտի գործերի անվանակարգի կազմման աշխատանքներում:
10) կատարվում է արխիվի թվայնացում:

2.3.Արխիվն իր հիմնական խնդիրների և դրանցից բխող գործառույթների իրականացման համար իրավասու է՝

1) իրականացնել հսկողություն ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում-ներում փաստաթղթերի ընթացիկ պահպանման ապահովման նկատմամբ.
2) պահանջել ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումներից արխիվի աշխատանքի համար անհրաժեշտ տեղեկություններ և տվյալներ:

3. ԱՐԽԻՎԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1Արխիվը ղեկավարում է վարիչը, որն անմիջականորեն ենթակա է ինստիտուտի ռեկտորին:

3.2Արխիվի վարիչին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ինստիտուտի ռեկտորը:

3.3Արխիվի վարիչը պատասխանատու է՝

1) կանոնադրությամբ արխիվին վերապահված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար,
2) արխիվում փաստաթղթերի պահպանման, ազգային արխիվ փոխանցման և համապատասխան տեղեկանքները ժամանակին տրամադրելու համար:

3.4 Արխիվի աշխատողները պարտավոր են պահպանել ինստիտուտի ներքին կարգապահական կանոնները, գործել իրենց իրավունքների և պարտականությունների շրջանակներում, որոնք սահմանված են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ ինստիտուտի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

4. ԱՐԽԻՎԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

4.1. Արխիվը վերակազմակերպվում, կամ լուծարվում է ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն կանոնադրությունը ընդունվում, նրանում լրացումներ կամ փոփոխություններ կատարվում են ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

*Ուժը կորցրած ճանաչել ինստիտուտի գիտական խորհրդի՝ 31.01.2012թվականի նիստում հաստատված ՝ 'Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ' պետական ոչ առևտրային կազմակերպության արխիվի կանոնակարգը: